26.09.2022
350-13

Դիլիջան համայնքի ղեկավար
Դավիթ Սարգսյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ո՞վ է Ձեր համանքի տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը (խնդրում ենք նշել անունը, ազգանունը, իր հետ կապի միջոցները)։
2. Խնդրում ենք տրամադրել իրավական ակտի պատճենը (կամ ակտիվ հղումը), որով նշանակվել է ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը:
3. Առկայության դեպքում, խնդրում ենք տրամադրել Համայնքապետարանի պաշտոնական կայքի այն էջի հղումը, որտեղ կարելի է գտնել ՏԱ պատասխանատու անձի մասին տեղեկությունները։

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հ. Գ. Սեպտեմբերի 28-ը տեղեկատվության ազատության միջազգային օրն է:

Ուշադրություն։ Խնդրում ենք հարցմանը ***պատասխանել բացառապես էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am